ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«----»---------- 2016թ. N----- -Ա

ՈՐՈՇՈՒՄ

ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 71-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի հ.286 որոշմամբ հաստատված կարգի 32–րդ կետով և հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 23-ի հ.451-Ն որոշումը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Համաձայնություն տալ Էդուարդ Ստեփանյանին սեփականության իրավունքով պատկանող Դավթաշեն 1-ին և 2-րդ թաղամասերին հարող տարածքում գտնվող հ.29 հասցեում, տարածագնահատման 7-րդ գոտում գտնվող 600.0 քմ մակերեսով հողամասը (անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի գրանցման 02.08.2004թ. հ.1127162 վկայական) Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող Դավթաշեն 2-րդ թաղամասի հ.6/9 հասցեին հարող և տարածագնահատման 7-րդ գոտում գտնվող 600.0 քմ մակերեսով համարժեք հողամասի հետ փոխանակելուն։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Քննարկվող նախագծով նախատեսվում է Էդուարդ Ստեփանյանին սեփականության իրավունքով պատկանող Դավթաշեն 1-ին և 2-րդ թաղամասերին հարող տարածքում գտնվող հ.29 հասցեում, տարածագնահատման 7-րդ գոտում գտնվող 600.0 քմ մակերեսով հողամասը (անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի գրանցման 02.08.2004թ. հ.1127162 վկայական) փոխանակել Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող Դավթաշեն 2-րդ թաղամասի հ.6/9 հասցեին հարող և տարածագնահատման 7-րդ գոտում գտնվող 600.0 քմ մակերեսով համարժեք հողամասի հետ:

Հողամասերի փոխանակությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ քննարկվող հողամասը գտնվում է անկանոն կառուցապատման գոտում և առկա է խնդիր՝ կապված տարածքում առկա հողամասերի մուտքի ապահովման հետ, որն արդյունք է նախկինում հարակից կառուցապատողների շեղումներով իրականացված շինարարության, ինչը խոչընդոտ է հանդիսանում նոր կառուցապատվող թաղամասի բնականոն զարգացման համար:

Ստեղծված քաղաքաշինական իրավիճակը շտկելու անհրաժեշտությունից ելնելով՝ նպատակահարմար է գտնվել առաջարկելու տվյալ հողամասի սեփականատիրոջը կատարել հողամասերի փոխանակում, ինչի արդյունքում հնարավոր կլինի ապահովել տարածքի առավել կանոնակարգված քաղաքաշինական իրավիճակ, բարձրացնել տվյալ հատվածի օգտագործման արդյունավետությունը:

Փոխանակվող հողամասերը ընդգրկված չեն ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի կազմում և գտնվում են Երևան քաղաքի հողերի տարածագնահատման 7-րդ գոտում:

Համաձայն Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 71-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. ապրիլի 12-ի հ.286 որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետի՝ համայնքի վարչական սահմաններում, համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասերը փոխանակվում են համայնքի ավագանու համաձայնությամբ, համայնքի ղեկավարի որոշման հիման վրա:

Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտություն է առաջացել կայացնելու ավագանու համապատասխան որոշում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ